## ԲԱՑՈՒՄՆ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԿՍԵՌ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ.

—

*Ըստ միջնորդութեան Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ երկսեռ Հայ Հոգևոր Դպրոցաց բացման համար* ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԲԱՐԵՀԱՃՈՒԹԻՒՆ *կայացած լինելով, Մարտ ամսոյ* 18-*ին ստացուեց Կովկասու Գլխաւոր Կառավարչապետի թուղթը առ այս գրով յ7ն ամսոյ* № 357.

*Ի ցոյց երախտագիտութեան առ* ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍՐՆ *երկարատև զանգահարութեամբ նոյն իսկ օրը Մայր Տաճարում գոհաբանական մաղթանք կատարուեց և հանդիսադիրն էր Վեհափառ Հայրապետը։*

*Այս աւետաւոր տեղեկութիւնը բոլոր Հայոց հաղորդելու համար Սինոդի կողմից նոյն իսկ օրը հեռագրուեց առ Առաջնորդս Հայոց Ռուսաստանի, ըստ այսմ.*

*«Ըստ միջնորդութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի եղև* ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԲԱՐԵՀԱՃՈՒԹԻՒՆ *վասն բացման դպրոցաց: Կատարեցէք մաղթանս և առաջարկեսջիք ստորագրեալ Ձեզ Հոգևոր Կառավարութեանց և պաշտօնավարաց կատարել հանդիսաւոր մաղթանս վասն կենաց և բարօրութեան* ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐՆ *մերոյ յաղագս նորագոյն գթութեան* ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ *առ եկեղեցին Հայոց և առ Դպրոցս նորա։*

*«Վասն բացման դպրոցաց սպասել առանձին տնօրէնութեան Նորին Վեհափառութեան»։*

*«Կ. Պօլիս, առ Պատրիարքն Հայոց.*

*«Ըստ միջնորդութեան Վեհափառ Կաթուղիկոսի Ազգիս, այսօր ստացեալ եղև վասն բացման դպրոցաց Հայոց թոյլտուութիւն* ԲԱՐՁՐԱԳՈՅՆ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.